

«ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ ԱՆՏԻՈՔԱՅ» ԳՐՎԱԾՔԻ ՅԵՂԻՆԱԿԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ԳԱՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Կանոնագիրք Հայոց»-ում տեղ է գտել դավանաբանական բնույթի մի բնագիր¹, որը որոշ տարբերություններով պահպանվել է նաև այլ ձեռագրերում և վերագրվել տարբեր անձանց: Այսպես, «Գիրք թղթոց» դավանաբանական ժողովածուում այն հայտնի է Աբդիշո եպիսկոպոսին վերագրված թղթերի շարքում՝ երկու թղթի տեսքով². «Կնիք հաւատոյ» ժողովածուում այն պահպանվել է անանուն, ընդ որում՝ բնագիրը վերջից թերի է³, իսկ Երուսաղեմում պահվող մեկ ճառընտիրում այն Աբրահամ կաթողիկոսի անունով է՝ բաղկացած երկու մասի⁴:

«Կանոնագիրք Հայոց»-ի Ա խմբի ձեռագրերում վերոնշյալ բնագիրը տեղ է գտել ԼԳ (կանոնախմբերի ընդհանուր ցանկում՝ «Կանոնք Անտիոքայ Երկրորդ» վերնագրով), իսկ Բ խմբի ձեռագրերում՝ ԻԳ համարի տակ⁵: Պարզեցինք, որ սույն բնագիրը տեղ է գտել ևս 3 ձեռագրում՝ ՄՍ Հ^մ 571 (թ. 135թ-140թ՝ «Ի քաղաքն Անտիոք, որ եղև մասնական ժողովն, որք ժողովեալ էին ԼԳ եպիսկոպոսք, նոցա դաւանութիւնն, նոյնպէս և նզովքն ի վերայ հերետիկոսաց, որք են այսոքիկ. Առաջինն՝ Արիոս, բ. Մակեդոն, գ. Պօղոս Սամոսատցին, դ. Մանիքեցիք, ե. զՄարկիոն, գ. զԲարդուժան, է. զԷւտիքէս, ը. Փլաբիանոս, թ. զԱպողինար, ժ. զպեղծն Նեստոր, ժա. զԹեոդորոս, ժբ. զԴիողորոս, ժգ. զԻբիա և զԱկակ և զԲարա ի Մծբնա և զայլ ևս, կանոնս նոցա և զՏօմարն Լևոնի և զԱւերիանոս»), Հ^մ 573 (թ. 220թ-222ա՝ «Խոստովանութիւն սուրբ ժողովոյն սրբոց հայրապետաց»), Հ^մ 1983 (թ. 172թ-173թ՝ «Խոստովանութիւն ժողովոյն Անտիոքայ») ձեռագրերում, որոնք բոլորն էլ ժողովածուներ են⁶: Սրանցից հնագույնը Հ^մ 573 ձեռագիրն է, որ թվագրվում է XV դարով, Հ^մ 571 ձեռագիրն ընդօրինակվել է XVII դարում, իսկ Հ^մ 1983-ը՝ 1687 և 1712 թվականներին: Այդ բնագրերի մեր ուսումնասիրությունից կարելի է ենթադրել, որ ամենայն հավանականու-

¹ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Եր., 1971, էջ 65-72:

² Տե՛ս «Գիրք թղթոց», «Մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901, էջ 66-67, 68-69 (այսուհետ՝ «Գիրք թղթոց», 1901):

³ Տե՛ս «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ եկեղեցւոյ», հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի, Ս. Էջմիածին, 1914, էջ 369-371 (այսուհետ՝ «Կնիք հաւատոյ»):

⁴ Տե՛ս «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. Բ, կազմեց Նորայր եպս. Պողարեան, Երուսաղեմ, 1953, էջ 32-33:

⁵ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ VIII-IX:

⁶ Ձեռագրերի ընդարձակ նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Բ, կազմեցին՝ Օ. Եզանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթրեսեան, Ա. Քեօշկերեան, խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եզանեանի, Ա. Զէյթունեանի, ցանկերը՝ Վ. Դելրիկեանի, Եր., 2004, սն. 1313, 1327, «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատ. Զ, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Եր., 2012, սն. 840:

թամբ դրանք վերոնշյալ ժողովածուներին են անցել Կանոնագրքից: Սակայն, բացի որոշ ոչ էական տարընթերցումներից, Կանոնագրքում պահպանված տեքստի նկատմամբ դրանք ունեն կառուցվածքային և այլ տարբերություններ: Այսպես, Հ^Պ 571 ձեռագրում Աբդիշոյի 2 թղթերին համապատասխանող 2 հատվածներն էլ բաժանված են ավելի փոքր հատվածների (ա-ժբ., ա-է.), իսկ վերջում հիշվող երեսուներեք եպիսկոպոսների ցանկից բացակայում են Մովսեսի և Պատակիոսի անունները (թեև բնագիրը Կանոնագրքի նմանությամբ ավարտվում է «ԼԴ եպիսկոպոս» բառերով)⁷: Ի տարբերություն Կանոնագրքի ձեռագրերի մեծ մասի՝ այս ժողովածուում Պողոս Սամոսատցու և Փլաբիանոս եպիսկոպոսի նզովքների միջև պահպանվել է նաև Մանիի, Մարկիոնի, Բարդաժանի ու Եվտիքեսի նզովքը⁸:

Հ^Պ 573 ձեռագրում ևս բնագիրը հիմնականում նույնական է Կանոնագրքի բնագրին, թեև հետաքրքրական է, որ վերնագրում հիշվող ժողովի հատվածում բացակայում է վայրի՝ Անտիոքի հիշատակությունը: Այս ձեռագրում համարակալված է միայն առաջին հատվածը (նզովքները՝ ա-ժբ.), բացակայում է վերջին հատվածը, որտեղ հիշատակվում են Անտիոքի ժողովը և եպիսկոպոսների անունները: Այստեղ, սակայն, Ապոլինարի նզովքին (ե.) հաջորդում է Եվտիքեսի բավականին երկարաշունչ նզովքը (զ., 22,5 տող), որից հետո նզովվում են Մանին, Մարկիոնը և Բարդաժանը (է.), իսկ ամենավերջում՝ Սևերոսից հետո, նզովվում է նաև Սաբել Լիբիացին (ժբ.)⁹. մյուս բոլոր ձեռագրերում Եվտիքեսի այս երկար նզովքը, նաև Սաբելի նզովքը չկան¹⁰:

Իսկ Հ^Պ 1983 ձեռագրի «Խոստովանութիւն ժողովոյն Անտիոքայ»-ում, որը համընկնում է միայն Աբդիշոյի առաջին մասակին, բացակայում են համարակալումները: Բնագրի ընթերցումներն ավելի նման են Կանոնագրքի տարբերակին, որոշ տեղերում կան կրճատումներ (ինչպես, օրինակ, Թեոդորոսի [Մոպսուեստացու], Դիոդորոսի [Տարսոնացու] և մյուսների նզովքներին վերաբերող հատվածում՝ թ. 173ա): Եվտիքեսի նզովքը դրված է Լևոնի «Տոմար»-ի նզովքից հետո, իսկ անունն աղավաղված է. «Նզովենք և զ[եւ]տիքայն և զհամախոսն նորին որ ասաց մի բնութիւն Քրիստոսի շփոթեալ և մարմինն առ աջօք առանց Կուսինն»¹¹: Սրան հաջորդում է Սևերոսի նզովքը, իսկ Մանիին, Մարկիոնին, Բարդաժանին նզովող հատվածը բացակայում է:

Հավանական ենք համարում քննվող բնագրի առկայությունը հայերեն այլ ձեռագրերում ևս, մասնավորապես Մաշտոցի անվան Մատենա-

⁷ Տե՛ս ՄՄ ձեռ. Հ^Պ 571, թ. 140բ: Հետաքրքրական է, որ այդ նույն եպիսկոպոսների անունները բացակայում են նաև ՄՄ Հ^Պ 3148 ձեռագիր «Կանոնագրքում», որն ընդօրինակվել է հավանաբար XII դարում (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 72, «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Եր., 1964, էջ LXVII):

⁸ Տե՛ս ՄՄ ձեռ. Հ^Պ 571, թ. 136բ:

⁹ «Եւ առաւել նզովենք զՍաբել Լիբեացի, որ ըստ բնութեան միութեան զԳ. իս անձնաւորութիւնն ի մի հաւաքեալ, մի անձն և մի բնութիւնն ասաց զՍուրբ Երրորդութիւնն» (ՄՄ ձեռ. Հ^Պ 571, թ. 221բ):

¹⁰ «Գիրք թղթոց»-ում Կոմիտաս կաթողիկոսի անվամբ հասած «Վասն հաւատոյ» բնագրում ևս նզովվում են բազմաթիվ հերձվածողներ, այդ թվում՝ Սաբելը: Ահա այդ հատվածը. «Նզովեցին և զՍաբելիոս Լիբացի՝ որ զսուրբ Երրորդութիւնն մի դէմ խոստովանի, և ոչ երիս անձինս կատարեալս» («Գիրք թղթոց», 1901, էջ 215): Կարծում ենք, որ հավելումը Հ^Պ 573 ձեռագրին կարող էր կատարված լինել մեկ այլ բնագրից:

¹¹ ՄՄ ձեռ. Հ^Պ 1983, թ. 173ա:

դարանուն պահվողների թվում, բայց դրա մասին վերջնականապես կարելի կլինի խոսել հայերեն ձեռագրերի «Մայր ցուցակի» բոլոր հատորների հրատարակությունից հետո միայն (առայժմ հրատարակվել է 7 հատոր, մինչև ձեռ. Չ^մ 2400-ը):

Համեմատելով «Կանոնագրքի», «Գիրք թղթոցի», «Կնիք հաւատոյի» և երուսաղեմյան ճառընտիրի տարբերակները՝ Վ. Հակոբյանը ենթադրում է, որ բնագիրը «Կնիք հաւատոյ»-ից է անցել Կանոնագրքին¹²: Ապա հավելում է. «Իսկ թե այս նույն բնագիրը ինչպես է հանդես եկել այլ հեղինակների՝ Աբդիշո եպիսկոպոսի, Աբրահամ կաթողիկոսի անուններով, դժվարանում ենք որևէ բան ասել: Հենց այն հանգամանքը, որ այս բնագիրը տարբեր տեղերում հանդես է եկել տարբեր անուններով, իսկ «Կնիք հաւատոյ» ժողովածուում անանուն է, ցույց է տալիս, որ այն կեղծ է, թեև կարող է խոր հնություն ունենալ»¹³: Նորայր եպս. Պողարյանը «Գիրք թղթոց»-ի երկրորդ հրատարակության ծանոթագրություններում վավերական է համարել Հայոց Ներսես կաթողիկոսին ուղղված չորս թղթերը, որոնք մեզ են հասել Աբդիշո եպիսկոպոսի անունով, թեև հավելյալ բացատրություններ չի տվել¹⁴: Միաժամանակ «Գիրք թղթոց»-ին իր կողմից ավելացրած բնագրերի մեջ ներառել է նաև Երուսաղեմում պահվող նույն ճառընտիրից «Տեառն Աբրահամու Հայոց Կաթողիկոսի Խոստովանութիւն (ՉԳ.)» բնագիրը¹⁵:

«Կանոնագիրք Հայոց»-ի Բ հատորում և «Գիրք թղթոց»-ում մեզ հասած բնագրերի տարբերակներում առկա են տարընթերցումներ. հերձվածողներին վերաբերող նզովքների հատվածում Կանոնագրքի բնագրում բացակայում են ոմանց անունները, որոնք առկա են «Գիրք թղթոց»-ում¹⁶: Իսկ «Գիրք թղթոց»-ը և «Կնիք հաւատոյ»-ն համեմատելով՝ կրկին կարելի է նախապատվությունը (հնության իմաստով) տալ «Գիրք թղթոց»-ում պահպանված բնագրին: Այսպես, «Կնիք հաւատոյ»-ի նզովվածների շարքում բացակայում է Եվտիքեսի անունը¹⁷, իսկ Սևերոսի (Անտիոքացու) անունը դարձել է «գեբերիոս»¹⁸: Համեմատության մեջ դիտարկենք նաև երուսաղեմյան ճառընտիրում պահպանված նույն բնագրի տարբերակը՝ իբրև Աբրահամ կաթողիկոսի «Խոստովանութիւն», որը Վ. Հակոբյանը իրավացիորեն մյուս տարբերակների համեմատությամբ ավելի հարազատ է համարում Աբդիշո եպիսկոպոսի առաջին թղթին: Ձուգահեռաբար դիտարկենք մի հատված այդ բնագրերից.

1. *«Նզովենք և զԱպաւղիմար որ ասաց թէ մարմին եառ ի կուսէն, և հոգի և շունչ և միտս ոչ առ»*¹⁹:
2. *«Նզովենք զԱպաւղիմարիս, որ ասաց թէ մարմին առ Ած ի սբ. կու-*

¹² Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ XLVII-XLVIII:

¹³ Նույն տեղում, էջ XLVIII:

¹⁴ Տե՛ս «Գիրք թղթոց», երկրորդ հրատարակութիւն, Երուսաղէմ, 1994, էջ 671 (այսուհետ՝ «Գիրք թղթոց», 1994):

¹⁵ Տե՛ս նույն տեղը, էջ Է, 673, բնագիրը՝ էջ 397-399:

¹⁶ Կանոնագրքերից միայն ՄՍ Չ^մ 778 ձեռագիրն ունի բոլոր անունները, մի փոքր հավելյալ մասով, իսկ ՄՍ Չ^մ 6496 ձեռագրում, բացի Բարդեսանի անունից, առկա են մյուս անունները (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 66, հմմտ. «Գիրք թղթոց», 1901, էջ 66):

¹⁷ Տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 370, հմմտ. «Գիրք թղթոց», 1901, էջ 66:

¹⁸ Տե՛ս «Կնիք հաւատոյ», էջ 370: «Գիրք թղթոց»-ն ունի «զՍևերոս» ընթերցումը (տե՛ս «Գիրք թղթոց», 1901, էջ 67):

¹⁹ «Գիրք թղթոց», 1901, էջ 67:

սեն, և հոգի և շունչ և միտս ոչ առ»²⁰:

3. «Նզովենք և զԱպօղիմարէս, որ ասաց, եթէ մարմին առ ի Կուսէն, և շունչ և միտս ոչ առ»²¹:

4. «Նզովենք եւ զԱպաւղիմար, որ ասաց թէ՛ «Մարմին ա՛ռ ի Սուրբ Կուսէն, եւ միտս եւ շունչ ոչ առ»²²:

Համեմատութիւնը հաստատում է, որ «Գիրք թղթոց»-ի տարբերակին ավելի մոտ է ճառընտիրում տեղ գտածը, իսկ «Կնիք հաւատոյ»-ում պահպանվածը ավելի հարազատ է Կանոնագրքում զետեղվածին: Պետք է նշել սակայն, որ Կանոնագրքում նշվածն է նաև Փլաբիանոս եպիսկոպոսը, մինչդեռ այդ հատվածը բացակայում է սույն բնագրի մյուս 3 տարբերակներում. «Նզովենք եւ զՓլաբիանոս եպիսկոպոս որ ասաց թէ՛ «Որպէս նմանութեամբ եւ ստուերաւք երեւեցաւ Որդին Աստուծոյ յաշխարհս եւ ոչ ա՛ռ ստուգապէս մարմին եւ շունչ ի Սուրբ Կուսէն»²³:

Մեկ այլ հատված՝ «Գիրք թղթոց»-ի և ճառընտիրի տարբերակների համեմատությամբ.

1. «Առաւել նզովենք զպեղծն Նեստոր որ հայիոյեաց և ասաց եթէ Մարիամ ոչ ծնաւ զԱստուած, բայց զմարդ արարած, որպէս զմի ոք ի մարգարէիցն. և այսու մեծ էր քան զմարգարէսն, զի տաճար եղև բանին աստուծոյ»²⁴:

2. «Նզովենք եւ զամպարիշտն Նեստոր, որ հայիոյեաց եւ ասաց թէ Մարիամ չէ Աստուածածին. այլ մարդ արարեալ եւ ստեղծեալ, եւ հասանելի եւ ապականացու ծնաւ»²⁵:

Սա ցույց է տալիս, որ ճառընտիրում պահպանվածը, թեև ամենամոտն է «Գիրք թղթոց»-ի տարբերակին, այնուամենայնիվ, խմբագրված է:

Այսպիսով, կարծում ենք, որ «Գիրք թղթոց»-ից բնագիրը երկու ուղղությամբ է զարգացել. անցել է ճառընտիր(ներ)ին՝ պահպանվելով երկու թղթերի տեսքով (ինչպես «Գիրք թղթոց»-ում է) և մտել «Կնիք հաւատոյ»-ի մեջ՝ իբրև արդեն մեկ բնագիր, իսկ վերջինից էլ՝ «Կանոնագիրք Հայոց», որտեղ բնագիրը ձևվել է իբրև ժողովական թուղթ, իսկ վերջում ավելացվել են եպիսկոպոսների անունները²⁶: Այն, որ բնագիրը միանշանակորեն

²⁰ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. Բ, էջ 32:

²¹ «Կնիք հաւատոյ», էջ 370:

²² «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 67:

²³ Նույն տեղում, էջ 66: Նշենք, որ, բացի ՄՍ Հ^մ 778 և ՄՍ Հ^մ 659 ձեռագրերից, մյուսները չեն պահել Փլաբիանոսի նզովքին նախորդող հատվածը, որտեղ նշվում են Մանին, Մարկիոնը, Բարդաժանը և Եվտիմեոսը, ՄՍ Հ^մ 6496 ձեռագիրը «փլաբիանոս եպիսկոպոս»-ի փոխարեն ունի «զմանի և զմարկիոն և զևտիմեոս», իսկ ՄՍ Հ^մ 10137 ձեռագրում, ինչպես Վ. Հակոբյանն է նշում, ուրիշ ձեռքով ջնջված է «զփլաբիանոս» անունը և ավելացված «զչարածողովն դիոսկորոսի յորում նահատակեաց զսուրբն փլաբիանոս» (նույն տեղում): Այս տարընթեցումները, սակայն, թույլ չեն տալիս վերջանականորեն պատասխանել, թե արդյոք Կանոնագրքում սկզբնապես եղել է Փլաբիանոսի նզովքը, թե հետագայում է անցել Կանոնագրքերի որոշ ձեռագրերի ուրիշ տեղից:

²⁴ «Գիրք թղթոց», 1901, էջ 67:

²⁵ «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատ. Բ, էջ 32:

²⁶ Բնագրի՝ «Կանոնագիրք Հայոց»-ում տեղ գտած տարբերակում կան 33 եպիսկոպոսների անուններ, իսկ բնագիրն ավարտվում է այսպես. «...յիշխանութենէ Հովտաց Ասորաց, ի Փիւնիկեաց, ի Նախնեաց յԱրաբաց, ի Միջագետաց, ի Կիւլիկեաց, ի Սուրաց: ԼՂ եպիսկոպոսք» («Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 72): Առաջինը Եվսեբիոս անունն է հիշվում (ի դեպ, այդ անունը վկայված է նաև Անտիոքի 341 թ. ժողովի կանոններում): Նշենք, որ միայն ՄՍ Հ^մ 859 ձեռագրում չի պահպանվել ցանկը (դրա բնագիրը քաղված է Կանոնագրքից), իսկ Բ խմբի ձեռագրերի մեծ մասում, ինչ-

սկզբնապես բաժանված է եղել երկու մասի, երևում է Կանոնագրքում նրա կառուցվածքից. համարակալված են Արդիշո եպիսկոպոսի նամակի պարբերությունները²⁷, իսկ ՄՄ Հ^Ս 659 ձեռագրում, որտեղ բնագիրը տեղ է գտել «Ցանկ նգովելոյ զԱրիոս և զայլ հերձուածս» (ընդհանուր ցանկում՝ «ԺԶ. Ցանգ նգովից Արիոսի»՝ թ. 1բ) խորագրի ներքո, Արդիշոյի երկրորդ նամակից առաջ նույնիսկ բովանդակային ցանկ կա²⁸:

Բնագրում տեղ գտած դավանաբանական խնդիրներից ելնելով (տարբեր հերձվածողների, այդ թվում՝ Նեստորի և Սևերոս Անտիոքացու, ինչպես նաև Քաղկեդոնի ժողովի ու Լևոնի «Տոմարի»)՝ այն կարելի էր վերագրել և՛ Արդիշո ասորի եպիսկոպոսին, ով մեծ դերակատարում է ունեցել VI դ. կեսերին հայ-ասորական եկեղեցական հարաբերություններում՝ գրելով նաև դավանաբանական թղթեր, և՛ Աբրահամ Աղբաթանեցի (607-613) կաթողիկոսին, ով պայքարել է քաղկեդոնականության և Հայոց եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման դեմ: Նշենք, որ բնագրի ստեղծման վերին սահման պետք է համարել Ը դարի առաջին կեսը, քանզի նգովված չէ Հուլիանոս Հալիկառնասցին, ով դատապարտվում է Մանազկերտի 726 թ. ժողովից սկսած²⁹: Ն. Ակինյանը գրում է, որ բացի Գանգրայի ժողովի կանոններից, «Վրթանեսի (Քերթող - Գ. Հ.) ծանօթ եղած է նաև Արդիշոյի մուծած «Խոստովանութիւնն ժողովոյն Անտիոքայ»»³⁰: Սրանով մի կողմից տեղեկանում ենք, որ Ն. Ակինյանը այս բնագիրը վերագրում է Արդիշո եպիսկոպոսին (թեև առանց հիմնավորելու), մյուս կողմից նրա ստեղծման վերին սահմանն իջնում է մինչև Է դարի սկիզբ՝ հաստատելով Աբրահամ կաթողիկոսի հեղինակության քիչ հավանական լինելը: Բացի այդ, «Գիրք թղթոց»-ում ասորիների Արդիշո եպիսկոպոսի անունով տեղ գտած մյուս 2 թղթերի³¹ հետ համեմատությունը, ինչպես նաև նշված երկու բնագրերի տեղը «Գիրք թղթոց»-ում հուշում են, որ ամենայն հավանականությամբ թղթերի հեղինակն ուղղափառ ասորիների Արդիշո եպիսկոպոսն է: Սրանով կարելի է բացատրել նաև այն հանգամանքը, որ թղթերը հետագայում ձևվել են իբրև հենց Անտիոքում տեղի ունեցած ինչ-որ մի ժողովի որոշումների ամփոփում: «Խոստովանութիւնն ժողովոյն Անտիոքայ» բնագիրը Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի (717-728) կողմից խմբագրված «Կանոնագիրք Հայոց» ժողովածուի մաս չի կազմել: Այն «Կանոնագիրք Հայոց» է ներմուծվել Ը դարի վերջերից Թ դ. կեսերն ընկած ժամանակահատվածում՝ նախքան Անանիա Մոկացի (946-965) կաթողիկոսի թղթերը, քանի որ երկրորդ Նիկիական կանոնները, որ հիշատակվում են Անանիա Մոկացու թղթերում³²,

պես նաև ՄՄ Հ^Ս 659 ձեռագրում չեն պահպանվել վերջին «ԼԴ եպիսկոպոսք» բառերը (տես «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 72, 329-330):

²⁷ Տես «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 69-71:

²⁸ Տես ՄՄ ձեռ. Հ^Ս 659, թ. 206ա, ցանկը հրատարակել է Վ. Հակոբյանը (տես «Կանոնագիրք Հայոց», հատ. Բ, էջ 329):

²⁹ Տես Ե. վրդ. Տեր-Մինասեանց, Հայոց յարաբերութիւնները ասորուց եկեղեցիների հետ, Ս. Էջմիածին, 1908, էջ 227:

³⁰ Հ. Ն. Ակինեան, Վրթանես վարդապետ Քերթող եւ իւր երկասիրութիւնները, «Հանդես անսորեայ», 1910, Փետրուար, էջ 42: Ն. Ակինյանը Վրթանես Քերթողին է վերագրում «Պատճառք Դ. ժողովոյն երկաբնակացն, Մովսէսի վրաց ուղղափառ եպիսկոպոսի» երկը (տես «Գիրք թղթոց», 1901, էջ 119-127):

³¹ «Գիրք թղթոց», 1901, էջ 59-61, 62-65:

³² Տես Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատ.

«Կանոնագիրք Յայոց»-ի Ա խմբի ձեռագրերում տեղ են գտել ԼԴ համարի տակ, իսկ «Խոստովանութիւն Ժողովոյն Անտիոքայ»-ն դրանցից առաջ է՝ ԼԳ համարի ներքո³³:

Այսպիսով, տարբեր ձեռագիր ժողովածուներում պահպանված և հիմնականում «Խոստովանութիւն Անտիոքայ» խորագրով կենցաղավարած բնագրի ուսումնասիրությունը հաստատում է, որ այն ամենայն հավանականությամբ վերագրելի է ասորիների Աբդիշո եպիսկոպոսին, իսկ դրա նախնական տեսքը ամենաանաղարտ ձևով պետք է որ պահպանված լինի «Գիրք թղթոց» դավանաբանական ժողովածուում:

Բանալի բառեր – ձեռագիր, դավանաբանական ժողովածու, «Կանոնագիրք Յայոց», «Գիրք թղթոց», «Կնիք հաւատոյ»

ГАРНИК АРУТЮНЯН – Об авторе сочинения “Антиохийские исповедания”. – В статье проанализирован рукописный текст, известный как “Антиохийские исповедания” и дошедший до нас в разных версиях (“Книга посланий”, “Печать веры”, “Армянская книга канонов”). В разное время его приписывали разным авторам. Изучение нескольких версий текста позволяет утверждать, что изначально он состоял из двух писем, которые, по всей вероятности, вошли в эпистолярный сборник догматического характера “Книга посланий”, а позднее были включены в другие сборники. Дальнейший источниковедческий анализ выявил, что эти письма принадлежат перу Абдишо, авторитетного епископа ортодоксальных сирийцев, сыгравшего важную роль в армяно-сирийских церковных отношениях середины VI в.

Ключевые слова: *рукопись, сборник догматического характера, “Армянская книга канонов”, “Книга посланий”, “Печать веры”*

GARNIK HARUTYUNYAN – About the Author of the Vernacular Text “Confession of Antioch”. – The article provides a striking instance about the vernacular text *Confession of the Antiochene Council* which has come down to our days through different collections (*Book of Letters (Epistles), Seal of Faith, Armenian Canon Book, Homily, Misselenies*) ascribed to different authors. The study of the original work in the above-mentioned collections divulges that it was initially composed of two parts: epistles recorded apparently in the *Book of Letters* which, in its turn, has come to be the providing source of dissemination for other manuscripts.

The source study gives an insight on the kinds of issues that concerns Abdisho bishop of orthodox Assyrians who appeared to be the author of the mentioned work and played a significant role in the relationships of Armenian and Assyrian Churches and enjoyed a good reputation in the midst of the 6th century.

Key words – *manuscript, epistolary collection, Armenian Canon Book, Book of Letters, Seal of Faith*

տասիրությամբ պրոֆ. Պ. Զ. Յակոբյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1998, էջ 137-138:
³³ Տե՛ս «Կանոնագիրք Յայոց», հատ. Բ, էջ IX: